



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 սեպտեմբերի 2011թ. թիվ 267-Ա

#### ԼՈՒՈՒ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. հունվարի 30-ի թիվ 134-Ն որոշմամբ հաստատված «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգի» 5-րդ կետի և ՀՀ Լոռու մարզպետի կողմից 09.02.2011թ. հաստատված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2011 թվականի հիմնական միջոցառումների պլանի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Ս/թ նոյեմբերի 16-ին Լոռու մարզի Ստեփանավան համայնքում անցկացնել հատուկ տակտիկական ուսումնավարժություն «Բազմաբնակարան շենքում գազի պայթյունի դեպքում բնակիչների պաշտպանության կազմակերպում և հետևանքների վերացում» թեմայով:

2. Ուսումնավարժության կազմակերպման և արդյունավետ անցկացման նպատակով նշանակել՝

1) Ուսումնավարժության ղեկավար՝ Լոռու մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Հ.Անտոնյանին:

2) Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ-օպերատիվ բաժնի պետ, փ/ծ փոխգնդապետ Լ.Դավաթյանին:

Շտաբը կազմավորել մարզային փրկարարական վարչության բազայի վրա, համալրել մարզային ՔՊ ծառայությունների ներկայացուցիչներով:

3) Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ՝ մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ Ա.Չատինյանին:

4) Միջնորդական խմբի ղեկավար՝ մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ, փ/ծ մայոր Ս.Խաչատրյանին: Խմբի անձնակազմը՝ մարզային փրկարարական վարչության աշխատակիցներից:

3. Ուսումնավարժությունում ընդգրկել.

Լոռու մարզային փրկարարական վարչությանը, փրկարարական ջոկատին, Ստեփանավանի հրշեջ փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ, «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ Լոռու ԳԳՄ Ստեփանավանի տարածքային տեղամասից և «ՀԷՑ» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղի Ստեփանավանի էլցանցից մեկական վթարավերականգնողական բրիգադներ, Ոստիկանության Լոռու մարզային վարչության Ստեփանավանի բաժնից մեկ վերակարգ, Ստեփանավանի շտապ բուժօգնության ծառայությունից մեկ բրիգադ, Ստեփանավանի քաղաքապետարանին:

4. Մարզային փրկարարական վարչության պետին.

1) մշակել և մինչև սեպտեմբերի 26-ը հաստատման ներկայացնել ուսումնավարժության մասնակիցների ցուցակը, ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը և ապահովել պլանով նշված միջոցառումների սահմանված ժամկետներում կատարումը:

2) Սույն որոշումը տրամադրել ուսումնավարժության մասնակիցներին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

2011թ. սեպտեմբերի 23  
ք.Վանաձոր



Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ